

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

(८-८-८-८-८-८-८-८) :

Q. 2 - F. B.

Գաղտնականց գերմանացուց. — Պատճառ զապիթելոյն. — Ցանացափմութիւննաց. — Խան սոցա զնէ ի մատի զիալ յերուաղմէ. — Թէ աղղոցութիւն ունին սորա ի բնակիւ շրջապայից Տիխիսոյ. — Արովեան. — Զեւ տանց Տիխիսոյ. — Բնաւորութիւն եւ տարազ զգեստու բնակչաց. — Ընդունելութիւն կուսականի կովկասու. — Դևսպան Պարսից. — Արսայ Կովկասու Թորհայու. — Թէլ Անդրացի. — Արսէն աւազոկ. — Ազնաւականք Վարս. — Բազրատունիք եւ Օրովենանք. — Աւանդութիւնն զ. Դիբորէ. — Ուխտատեզին Մարկոփի. — Նախանձչիկ յոխտատեզւոցն. — Հսնաֆ Տիխիսոյ:

Որպէս լրայ, գաղթականք Գերմանացւոց
յայնկայս Կովկասու են ըստ մեծի մասին Շվաբք
Վերպեներեղիք, որք կրօնական անրաւականու-
թեան առթիւ թողին զհին հայրենիս իւրեանց
յամի 1818. վասն զի ի սմին ժամանակի ընդ
այլ և այլ փոփոխութեանց մուծան ի նոսա և
նոր երգք եկեղեցականք, համարեալք առ շինա-
կան ընդ դէմ վարդապետութեան հաւատոց իւր-
եանց, ուստի չկամելով թողու ի ձեռանէ զհին-
սըն, զմիմիթարութիւնս հարց նոցին, յանձն ա-
ռին գաղթել: Տէրութիւնն Ռուսիոյ ետ նոցա-
բնակութիւն մերձ յօտեսայ. այլ անդանօր չկա-
րացեալ նոցա կեալ լաւապէս, խնդրեցին և փո-
խազբեցան մեծաւ մասամբ ի Կովկասեան սահ-
մանք. ուր իսկզբանն մեծամեծ նեղութիւնք եկին
ի վերայ. Հիւանդութիւնք, մահ իսաշանց, նուա-
զաւթիւն բերոց երկրին, հետևանք անզիմանալց
զընութիւն և զեղանակ (կլիմայ) տեղուցն. բայց
զկնի յաղթեցին այսմ ամենայնի. բազումք ի
նոցանէ փարթամացան ընչիք և մեծ մասն այժմ
գտանի ի բարուք միճակիւ —

Սոքա հպատակնեն Աւետարանական հոգևոր
տեսչութեան 28), և տէրութիւնն Թուսիոց շինի

(28) Консисторія. Կառտինարեն Consistorium. և բառէս
consistere, մողովի և խորհուրդ կամ ի խորհրդակցութիւն
առաջ բառին քանիստորիա իմացած լինի հոգեւոր կամ ա
ռաջորդական Առեւան, ուր վճռ ին եկեղեցական գործք, խոր
հըրով բառաց:

միջամնեւս յեկեղեցական գործս նոցա, պահպառ-
նեն զիփրեցեալ երդու իւրեանց զատաջինսն, ին-
քեանք ընտրեն զքահանայս, զորս յառաջագոյն
զգուշութեամբ պատրաստեն յուսմունս և ի պահ-
պանութիւն վարդապետութեանց իւրեանց յար-
ժանաւորն ընդունելութիւն՝ հովուական աստի-
ճանի 29) . բայց տես դու, զի զարձեալ արմատա-
ցեալ հովի կրօնական հերձման 30) և աստանօր
նորանոր ուստ արձակէ:

Զգացումն կրօնական հարստահարութեան, զոր բերին սոքա ի հոյրենի երկրէն իւրեանց, աստ փոխեցաւ ի գաղափար. այն է՝ քաջ հասու եղին թէ ծշմարիտ հաւատն ամենայն ուրեք անկեալ է և պարտի անկանիլ ի բովս փորձանաց թշնամուցն մարդկային սեռի. ծանեան թէ յայսմ ժամանակի մնայ մրայն փոքրաթիւ հօտ ծշմարիտ հաւատացելոց. և ըստ նախանցելոց գուշակութեանց մարդիկ պարտին ակն ունել գալստեան Մեսիայի և հաղարամեայ թագաւորութեանն. ուստի հարկ ի վերայ կայ ծշմարիտ հաւատացելոցն պատրաստ գտանիլ, յանձին կրելով զմաքրութիւն և զպարզութիւն նախնագարեան քրիստոնէութեանն՝ որ է հրաժարիլն յամենայն ընչից և ստացուածոց, միայն զառ օրեայ պարէնս հայթայթեալ, և անցուցանելն զամենայն ժամանակս պարապս յազօթս և ի պահս մերժելով զգեղախութիւն բնաւին. Զայս գաղափար արծարծեցին առաւել քան զառաւել հրատարակեալն ի Վիրդենբերգ գիրք Միքայէլի Հանոյ, և Նշանաւոր աշխատութիւն Խւնգա. Ծտելինզա. ուստի բաժանեցան յերկուս մասունս. մասն՝ որ առաւել իրատամբեր էր, և զվախճան աշխարհի գնէր լինել ի նմին աշխան, պահանջէր իսպառ զժութկալութիւն յամունութենէ, և ոչ տանէր բնաւ բացառութեան նոր ամուսնութեան իրիք. իսկ միւս մասն ոչ ընդունէր զայնչափ մօտահաս վախճան աշխարհի, վասն որպէս ոչ այնչափ խիստ ըստ առաջնոյն. բայց երկոքին ևս կամէին թողուլ զինչ իւրեանց զաստեաց, երթար յերուսաղէմ և տե-

(29) Երանիք թէ և ի մերում աշխարհի տեսանեաց զայն նաև կապոյց հոգածութիւնն

(30) Сепаратизмъ. Сепаратизмъ опровергнулся въ 1918 г.

սանել թէ զինչ լինիցի, առաջնորդ նոցա, (առաւելապէս խատակեաց մասին) էր յիսնամեայ կին ոմն ի նոսա իբրև խրատատու և զիսաւորւ Սա՝ որպէս հաստատէին՝ անթերի գիտէր ի բերան զնատուածաշունչ զիրս, ուստի յամենայն ի խօսս բերէր զվիզայութիւնս և ճարտար բանիք իւրովք այնչափ ազդէր յամենիսին՝ մինչ զի սկսան վաճառել զտունս և զանգս իւրեանց, բաշխել այլոց զինչս, և չա արակաց զրել ի միջի զպիտոյս կեռնաց, և կինն յուսազրէր զամենեսին և ասէր, թէ ի նշանակեալ աւուրն առաջնորդեացէ ածցէ զնոսա յերուսաղէմ ընդ նոյն ուղղութեամբ երկնից, ընդ որով նայն անկանի, —

Այլ իրազեկ լիալ տէրութիւնն արգել զնոսա ի ճանապարհէ, և պատուիրեաց զի փոխանակ բազմութեամբ գաղթելոց, առաքեացն նախ պատզամարս ի Տաճկաստան խնդրել զհրաման մինքնակալէն Տաճկաց վասն անցանելոց յերկիր նորա և ապա թոյլ տացի նոցա երթալ. ընդ այս հաւանեալ ոմանց ընտրեցին արս երիս և առաքեցին ի Կ. Պոլիս, իսկ այլք՝ գոզզիր համօրէն բազմութիւնն ըստ թուոց յինից գերդաստանաց թելադրութեամբ պառաւ կնոջն պնդէին թէ ոչ կամիմք զնել զյոյս մեր ի մարդկասին իմաստութիւն և ի խնամ, այլ ի նախասահմանութիւն Աստուածամին, յազդումն և ի բարբառ խղճի, որ խօսի ի խորոց որտի, Իբրև ամենայն ջան ի համոզել զնոսսա ընդ վայր էանց, Պ. Կ. իշխանաւորն տեղույն ընկայաւ պատուէր հրամանի բուռն զօրութեամբ պահպանելոց զնոսա. ազդ լինի նմա թէ պատզամարտքն գալոց են յայս ինչ օր, և նա երթեալ հասանէր ի մշշ զիշերի և ունէր պահնակօք զանցը ընդ որ անցանելոց էին, և ինքն ի քուն մըտանէ. Նոր տիւն զգիշերն մերժէր, և ահա լինի լինին ձայնք երգոց եկեղեցականաց. Պ. Կ. ընթանայ և տեսանէ զրազմութիւնն յերկուս կարգս բաժանեալ և առաջի նոցա յիշատակեալ կինն, սկսանի խօսել ընդ նմա և նա ոչ առնէ պատամինի. ապա ըմբռնէ զինին և անդէն զկայ առնուն ամենեքեան, բան երգք, կինն անկանի ի ծունկս, և ամենեքին նոյն օրինակաւ. յետ սակաւոց յարուցեալ սկսանի ասել բանս ինչ ի Ս. Գրոց՝ որք հրամայեն հպատակ կալ տէրանց

մարմնաւորաց, և յանձն առնու երթալ կալ ի տուն և սպասել վախճանի իրացն. չւ հասեալ էին պատզամաւդրքն՝ թողի մեկնեցայ ի նոցանէ.

Բայց պարտ է ասել թէ գաղթականք Գերմանացւոց ի սահմանս Տիփիսոյ ծաղկեալ են յոյժ, ուստի և պիտանիք ընակացն. Տիփիսոյ, որք զնւրոպական վարեն կենցաղ. պիտանիք և զօրացն Առուսաց աստիճանաւորաց և պաշտօնակալաց. ի ձեռս նոցա է ամենայն այգեգործութիւն և պարտիզանութիւն. սերմաննեն և պատրաստեն զիսաւարտ (բանջար) և աճեցուցանեն զթուունս պիտանիս ի սնունդը Վիլլ ծոյլք են և անընդունակը աշխատութեան. սիրեն զօ. զգեստնախմնձոր (կարտոֆիլ), զնեն կամ խնդրեն կամ զողանան ի Գերմանացւոց, և մինչ ցարդ ոչ խորհին թէ. և բնդեանք կարող են սերմաննել և ունել, եթէ յանձն առցին. առ որ զշետ գայ ասել. թէ որ չափանիք և ծաղկեալ են զաղթականք Գերմանացւոց, զարձեալ օգուաս յոյժ սակաւս բերեն շրջակայ ազգացն Վրաց և Թաթարաց. վասն զի Վիլլ անչողք են և ծոյլք և Թաթարք իբրև Մահմետականք խորչին ի նոցանէ. Երանի թէ գաղթականութիւնս այս ի Հայաստան կալեալ էր ընականական լուսաւորութիւնն փութով ունէր տարածել ի նոսա և աշխարհն ուռծանայր անթիւ բարութեամբ:

Աղբերք փարթամութեան Վրաց են անամնեղնք. բայց սոքա ջանան ընդհանրապէս բազմացւցանել զօշնարս և զխոզս, զի և զիխաւոր կերասկուր նոցա է միս խոզի և ոչխարի. հարցումնէ, և զիշարդ Վիլլ կարացին հաստատուն պահպաննել զքրիստոնէութիւնն և չանկանիլ ի Մահմետականութիւն, մինչդեռ նոցին թագաւորք խկի ի պահպաննել զմեալ զինոց իւրեանց առաջի Պարսկաց Մահմետականս անուանէին զինքեանս, և եկեղեցին նոցա այնչափ հարուածոց և նեղութեանց նեթարկեցաւ. մի ի հեղմնակաց զնէ թէ այնումիայն, զի նոքա չկարացին հրաժարիլ յերկուց զիխաւոր բերց երկին, ի զինւոյն և ի խողնեւոյ. Շինականք Վրաց ուտեն զհաց երիցս անզամ յաւուրն, յառաւոտու, ի կէս աւուր, և յերեկու-

յի. յառաջին երկու նուագս կերպութք նոցա
լինին ըստ մեծի մարմին սառն իրք. որպէս հաց,
սոխ, բանջար և լու. (յաւուրս պահոց), կամ կամին
մածուն, պանիր և լու. (յուտեաց աւուրս). իսկ
յերեկոյի ջրիմ:

Յառուրս մեր էր ասու ի Տիֆլիս Արօվիան *).
ընդ որում ծանօթացաք. զնմանէ յիշատակելոց
և յաճախ ի բանս մեր ի ստորև. ըստ որում
նա հաղորդեաց մեղ զամենայն տեղեկութիւնն
զհամասելիցն իւրոց. — Աա զժագումն առնու ի
մեծարյ տոչմէ, զինաւորի Հայարնակ աւանի
միոյ. նուիրեալ էր սորա զանձն ի կրօնաւորու-
թիւն և զրպութեան ունէր կոչումն ի մեծահրա-
չակ վանս Էջմիածնի. Յորժամ Պարող ճանա-
պարհորդեալ ի կողմանսն յայնոսիկ երթայր և
լունել ի զլուս Մասեաց, յայց ել վանից Էջ-
միածնի, և ցանկացեալ ունել զըք ի հմուտ տե-
ղացւոցն ուղիկից ինքեան, եղիտ զերիտասարդն
Արօվիան յարմար պահանջման իւրոց, և ընդ նմա-
ուղեղորդաւ. Տեսեալ զմեծահանճար տաղանդ
նորա տարաւ զնա ընդ իւր ի Դորսատ և ետ ի
համալսարանն տեղուցն. ուր կացեալ զամն չորս
վարժեցաւ բարւոքապէս յուսմունս համալսարա-
նին՝ մինչ զի յորժամ խօսէր և զրէր ի լիզու-
Գերմոնական՝ ոչ որ կարէր որոշել զնա ի Գեր-
մանացւոց. կին Էսո Գերմանուհի և յամենայն
կառավարութիւնս տան նորա Գերմանական տե-
սանիւր եղանակ և ճաշակ 3.1):

(*) Յափէք զի այս այս պատուական անյատ եղե. այս է
յաւուր միում ելեալ ի տանէ այլ ոչ դարձաւ յետո. ընդ վայր
անցին ամենայն բանք և հետազոտութիւնք ինդրազաց զւաւ-

Ուսու Թարգ:

31) Զպատմութիւն ուսումնական և անմոհանուն տանն
գնէ ի հանապարհորդութեան իւրում, և Պ. Մորիկ Վ. ագուէր
+ + + . . . բայց տանցմէ վարչի մնար նաև Պ. Արով-
եանին ներ ըրած ճանշարութիւնն, որն որ պատաւ Հայ է և
կըթաթիւնը Խիլանտի Գերմանացիներուն մէջ ընդունած է:
Աս մարդուս պատմութիւնը շատ հետաքրքրական է. Պ. Ա-
րովեան Խիլանտի վանքի տիրացուներէն մէկն էր, և քա-
հանապական վիճակի որուուած էր. Տարպատեան համալսարանի
վարժապետ Պ. Բարոդիր Հայաստան ըրտծ մարտորդութեան
մէջ Էջմիածնի, վանքն տեսնելու երթազով. Արօվիան պատան-
եակը մրայն գտնուեցաւ վանքի մէջ որ նուսէրէն կիսուր-
բարոչ կաթողիկոսին առաջ որ առ երիտասարդ սորկա-

Բնակիչք Տիֆլիսոյ բաց ի Ռուսաց և Գերման-
նացոց (արհեստաւորաց, գործաւորաց, վաճա-
ռականաց) են զինաւորաբար երեքին ազդք. Վ. իրք, Թաթարիք և Հայք. Թաթարիք (Թառլը) արհես-
տաւոր են, զարդինք, համետազորնք և լու. Հայք զրիմէ առ հասարակ վաճառականք են. առ Վ. իրք աղնուականք բազումք են, բաց ի սոցանէ զա-
նին և Անդրիացիք Գաղղիացիք, Պարսիկք. Տա-
ճիկք, Թաթարիք, Քիւրդք, Ռէզրեկք և այլ ամեն-
այն ցեղք Կովկասու, որչափ այլադրւան ազգք են աստանօր, ունին ամենիքն զհովկոր տեսուչ իւրիանց:

Մէք ի տես ելաք և բնակարանաց ազգացդ յի-
շատակիլոց. Թաթարիք չընկալան զմեղ ի տունս
իւրիանց զշայոց շուկայս և հիւրանցոց և եթ
տեսագ. իսկ Վ. իրք ստորին աստիճանի յակամայս

ւազն իրեն ճամբորդութեան ընկեր ըլլայ. կաթողիկոսն Տոր-
պատան վարժապետին աղաւանացը զիւս. առ երկու ուղե-
կեցները եղբօր պէս իրարու հետ կապուեցան. ամեն գուա-
րութեանց և վասնգները մէջ իրարմէ յէին բաժանուիք. ու
առ կերպով ստացած բարեկամութիւնը մինչեւ Բարտինին մահը
տեւեց. Պ. Արօվիան բարտին գիտութիւնը տեսնելով, ինք
առ գիտութեան եռանդ մը ստոցաւ, ու անոր յատ կազմուիք,
որ զիւքը Դորդատ իրկելու Միլոց մը գտնէր. որպէս զի հոն
անդաց համալսարանին մէջ ուսում և գիտութիւն սովորի և
կրթուի. ինչ և իցեւ բարութիւն մեռք բանելովը բազմակին
հասաւ. Առափ կառավարութիւնը ոգութիւն ընելով Պ. Ա-
րօվիանը Գորպատի համալսարանը մոռաւ. ուր վեց տարի ու-
սում սորվելէն ետքը, իր հայրենիքը գարձաւ ու իր հայրենաւ-
կեցները գործացնելու մեծ եռանդ ունէր. ուզեց մէկ գուրց
ըլ հաստատել, որուն վախճանն առ պիտօր ըլլար, որ ռ.ամիկ
Ֆոլովրդեան գործոցներուն վարդեմներ հանի, ու առ միջոցը
ազգանով կերպ մը կարձէր իր ազգին յառաջիմութեանը
ու կրթութեանը. բայց տեսնելով որ ասկիոյ յառաջ պիտօր
չերթայ, Պ. Արօվիան Էջմիածնի մէջ քահանացաւու տղոց
վարժապետ զրուի ուղեց, առ առ համար Պ. Արօվիան ելաւ Թիֆլիզ
գնաց. հոն դարձու մը հաստատեց, ու հնուեղաց յառաջուան
գոմուած զրուց առ անոր հետ միացուց, առ գողոցը շատ
անդամ գացի. ու Հայ գողոցի յառաջադիմութեանը վրայ
շատ զարմացայ. տասներուս տարուան ուղեք կը կարդան ու-
կրթեն, Հայերէն, Վ. բացերէն, Թաթարերէն, Գերմաներէն ու
Գաղղիացին. Տես Ճանապարհորդութիւն ի Հայ, Պ. Ա. ագուէրի.
Թարգ. Հ. Փ. Տ. 1851, երես առաջին

թաղումն մեզ մուտ գործել ի խրճիմա իւրեանց,
ուր յոց տգեղատեսք են. ի միջի ունին զիոր-
բիկ վառարան, ի վերայ նորա խփառը րերան
առ ի արձակել զծուին. ի մի հօգին պահարան
անկողնոց, իսկ ի միւն արկղ հացի և այլոց պա-
շարաց. միայն գունին առ սոսա զեղիցկաձև օ-
րորացք մանկանց ւառ աւօտու, յերեկոյի, Ա-իրը
և զիրաւորապէս կանայք նոցա զբանուն ի վե-
րայ հարթ տանեաց կամ ուատշդամբաց:

Ըլալիկ. (ասպետ) Կամբա Հառ. Բ. Իրեա 186
այսօրինակ նկարագիր տոս արտաքին կերպարա-
նաց և բնաւորութեան Վ. րաց. ։ Վ. իրք են բարձ-
րահասակ. ք, քաջանձնեայ. ք, և արծունկն. աշ-
ունին սեաւս և վայելչահայեաց. բնութիւնն ծր-
նանի զառա քաջակորով զինուորս, ժիր չեծե-
լազօրս, այլ առա ել ընդունակ. ք և վարժեալ. ք
են ի կողմնակի կամ ի մասնաւոր պատերազմունս
քան ի մեծս և կանոնաւորս. քաջ. ք են սորբ,
այլ զաժանք, հիւրասէրբ՝ բայց լրասէլք. մուա-
ցիք, այլ անուսք. իսկ զեղեցկութիւն սոցա յայտ-
նի է համօրէն աշխարհի ։

Դէս եղեւ ինձ մոտանել երրեմն ի կրպակ Հարա-
առն ուրումն, զնել զմանրամասն իրս. և խորա-
մանկ Հայն ջանացր խարիլ զիօս. Հայք բնակիչք Ք-
Տփխիսոյ առաւել են քան զայս, այն է հասա-
նեն ց10 000. Սպա գործունեայք են, աշխատա-
սէքք, և հանճարաւորք փառը առ փոքր զնելովն,
ի վարձու և յաւանդ առնելովն զկալուածո և
զինչո Արաց, ինքեանց սեպհականեն. ուսոի և
Ա-իբբ ատեն զնոսա. բայց Հայք գողջիր խարե-
բացք են առ հասարակ 32). միայն զողութիւն

(32) Ուստի արդեօք առեալ արգոյ հեղինակն խարեւաց
անոնանէ զայս, չե յայս, զի բաց աստի չիք տեսանել է բա-
վանդակ ճանապարհորդութեան նորս այսպիսի խօսս, բաց է
խոստվանելոց միշտ զմեծամեծ արժանաւորաթեւնը և ազ-
եռապին գոյն նոցա, զայս և չգնել, ինքն արգեօք ետրե-
սայ անոնագ կնքէ նոցա, յիւրոց համազմանց, եթէ յայլց
լակը լ. թէն որպէս փափր ինչ է վեր անդր եցոյց, ի մաս-
նել է կրոպակ Հայ մանրավաճառի ուրումն, չանցեալ է խո-
րել զնա, բայց անհաւատալի է կարծել թէ ուսեալ այցելուն
զայս միոյն կմըն առեալ ասեալ.

այս ինչ ոք զանուց խարել զիս,
այս ինչ ոք Հայ Եր.

սակաւ երբէք տեսանի ի նոսաւ Այլը համարին
ազնուարարոյք սակայն հասարակ ժաղովուրդ
նոցա զազանայ զմեղը և զմեղու զգրեալ զայն ի
մեզս իսկ Թամաթարք նշանաւորը են ի գողութիւ-
նըն մանաւանդ անասնոց Սոքա չոփրեն ընդ եր-
կար աշխատել պարապեն երկրագործութեամբ
միայն առ հարկի հայթայթելց զգարենն յար-
գելի է առ նոսա խաչնարածութիւն և թափա-
ռական կենցաղավարութիւն և եթէ շոնիցին
սևզհական խաչին՝ վարձու ծառայեն պղոց ի
զործ հոգուութեան չափառոցը են ի կերակուրա
այլ սիրան որդ զմիս ձիոր

Պ. Զայլցման պատմեաց թիվ 3 թէ զամս 25
յառաջ քան զայր, երթք միայն միահարկ տունք
զտանելին ի Տփիլս Եւրոպական Տարտարագի-

տութեամբ շինեալք, և այնք արքունականք. ։ Նահանգապետին, ի. վերատեսչի ամրոցին, ։ դատարանն. այլ ամենայն շինուածք յայնժամ գողցես չունեին մինչև անգամ՝ զապակէաւոր լուսամուտս. այլ ի ձմրան ծեփէին զնոսա թրղթով տամկացելովք ի ձիթոյ խոկ յամրան բացէին միանգամայն. կրտակք և մժերանոցք վաճառականաց համօրէն միայարկք. Տարազ Արացի զգեստուն էր յայնժամ սովորականն յամենայն բնակիս Տիֆինաց 55). կանայք սկիզբն արարին մոնանել ինչ ինչ փոփոխութիւնն ի ձևս զգեստուց. վատարարցքն ի կիր առին զեւրոպական սպիտակ սոնապան և օգիս, մինչ Արացի ձևն թոյլագրէթ միայն զգնութ մաշկեղէն մուճակը և յելանելն ի տանէ բարձրակրունէն սովիր. ի սկզբանն մատամբ ցուցանէին զնորաձևն, խոկ այժմ զրեթէ ամենեքին զնոյն ունին ձև. զարմանք զի աստ յոտից սկսանի փոփոխութիւնն հանգերձից, խոկ ի Գերմանիա ի զիսոյն.

Գտանի այժմ ի Տիֆիխ և վարժարան օրիորդաց, ուր աղջկունք Արաց խօսին ի լեզու Գաղղիարէն, և ընթեռնուն զվիպասանութիւն Բայլզակայց, բաղում անգամ չոքայ և ի վաճառանոցց քաղաքին, որ հետաքրքրական է յոյժ օտարին. ի կիւրակէի քրիստոնեայք փակէն զշուկայում միայն Մահմետականք գտանին վաճառողք, սակայն անդ հաւաքին և պարապեալքն ի գործոց. աստ է տեսանել խումբ մի արանց խոնեալ կուտակեալ յայսմ վայրի, և ի նոսա երգիչք (աշողք), յորոց մին զերզու երգէ Պարսից, Թուրքաց և Արաց. և այլք դաշնաւորեն զնուազարանս եղանակի ձայնի նորա. և են երգքս սովորարար կամ սիրոյ, կամ զիցազանցն անցելցժամանակաց, խումբ մի յայլում տեղւոջ, և ի նոսա ոմն՝ որ պատմէ վէպս (Հեքիաթ, մասալ) և առասպեկեալ աւանդութիւնն:

Եռաք աստանօր և զանժամանակ ամուսնութենէ. օրիորդ տպանամեայ տուեալ լինի առն. սովորութիւնս այս մեացեալ է ի ժամանակաց անտի, յորժամ աղջկունք Արաց վաճառեալ

(33) Յայտ է թէ և ու ի Մահմետական որք չանան միշտ որուիլ ի Քրիստոնէից ի հանդերձս և յոյլ իրս:

լինելն ի կանանիս Մահմետականաց, և թագաւորք նոցա յափշտականալ զգսաերս հպատակաց իւրեանց վաճառէին ի շահ անձանց. խոկ ծնողք առ ի պահպանել զգսաերս իւրեանց ջանային վաղագոյն ամաւսնացուցանել լնդ առն. թէ և այժմ օրէնք Որուաց արգելուն զամուսնութիւնն մինչև ցվեշտասանամեայ հասակ 54), սակայն չէ զիւրին եղծանել սովորութիւն ինչ. յանժամանակ ամուսնութենէն է զի յայսոսիկ կողմանս պատճառի արտաքոյ կարգի մահ նորահաս կանաց 55).

Ի 16-Ն Օգոստոսի ներկայացայ ընդհանուր հրամանատարին Կովկասու զիներալ Նեյդարտայ. ընդհանուր հրամանատար Կովկասու է փոխարքայ, և ընդունի մեծ պատիւ ի դրացի աղջաց Ասիոյ. ամենայն կուսակալ՝ որ նոր ի պաշտօն մուտ գործէ առաքէ գեսպանս ի Թէհրան յայտ առնել ԱԵՀ. Շահին զպաշտօնն իւր. և նորին ԱԵՀ. առաքէ նմա անցապաղ զիւր դիսպան ի շնորհաւորել զիւր կոչումն, ի մատուցանել զողջոյն սիրոյ և զջքանշան իւրոյ տէրութեանըն զառիւծուն և զարեգականն. ըստ ասացելոց ի սմին ժամանակի էր ի Տիֆիխ գեսպանն Պարսից եկեալ ի շնորհաւորութիւն պաշտօնի զիներալ – ատիւտանտ Նեյդարդայ. խոկ ընդունելութիւն նորա որոշեալ էր լինել ի միում աւուր

(34) Արգելու զամուսնութիւն մինչև ցվեշտասանամեայ հասակ օրինադրեալ է վասն նուսաստանեայց. խոկ Կովկասու, ցլրեքտասանամեայ հասակ. զի չերմ կլիմաց տեղւոյս, վազագոյն յարբուն հանե զընակիլս քան զնիւսիարձակս. Ներսէ Շնորհաւոր սուրբ Հայրապետն մեր կանոնագրէ չամուսնացուցանել զերկուտասանամեայ հասակ դստերն, և ցլրեքտասանամեայ ուղարկեն, անկատարք են երկորին հասակք ևս յամուսնութեան, բայց երեխ զի ի ժամանակակից հանգամանաց սուրբ երեխ սուրբ Հայրապետն թշլատրել վաղագոյն ամուսնութեան. որոյ արգելումն ուղցէ ոչ բարուք հետեան ըերեր յայնժամ ի ժողովրդականաւ:

(35) Վնասակար այս սովորութիւն տարաժամամանութեան արմատացեալ մնայ. ի մեր ժաղովուրդո վիճակացն Դարապառք, Սիւնկանց և հին աստիշեանի, յանհոգութենէ թոյլ և դանդադ վիճակաւորաց. մեք ինքնին տեսաք երկիցս և երիցս ի հարսնաթիւն ածեալ ութամեայ և իննամեայ աղջկունս. գեռաւրին ինչ է արդեօք զարալս առնուլ այսորինակ անկարչութեանց:

այն է ի 17 օգոստոսի. հրաւիրեաց և զիս կունակալն ներկայ գտանել ի նոյն հանդէս յամառանցն իւր արտաքց քաղաքին - Եկրկոտասանները որդ ժամկեւ ժողովեցաք ի մեծ գահին արքունեաց փախարքային. ի վերաց ճանապարհին կանգնեցան կացին զօրք և նուազածուք. իրրենուտ դեսպանն ի ներքս, ընկալու զնա կուսակալն առ զրան գահին, ուր ժողովնալ են զիսաւոր աստիճանաւորք պաշտօնակալք, և աւագանին Արաց. Էր նա (դեսպանն) այր բարձրաչասակ, ամրակազմ և նիշար. ի շարժմունաքաջակիրթ և յաջողակ. կերպարան նորա արտայստէր զկորովութիւն և զթափանցողութիւն մուց նորա. խօսէր աղաս ընդ կուսակալին ի լեզու Գաղղիական, նստեալ ի վերաց բազմոցի երկոցունցն ի միասին:

Աստ ծանօթս տուեալ քանի մի Ռուս պաշտօնակալաց, առի զանազան տեղեկութիւնն հետաքրրականս. զօ. սոքա են.

- Դժուարաւ թշլատրի Ռուս զինուորաց պարագել ի հասարակաց զործս, որպէս յուղութիւն ճանապարհաց և կամբջոց են. որք ամենակարեւոր աշխատութիւնք են կողմանցս. միայն առ իւրաքանչիւր զինուորական գունդս որոշեալ է տեղի աշխատութեան զինուորաց. սոքա ուսեալ են զբաղմակերպ արհեստ, և ի շահ անձանց իւրեանց պատրաստեալ վաճառեն բազում անզամ կահ ու կարասիս, զէնս, կառս, նուազարանս և լուզոյացեալն յայսպիսեացս արդիւնք մտանեն յառանձին գանձարանն զնդի իւրեանց, որ զտանի ընդ հսկողութեամբ և պահպանութեամբ նոցին իսկ զինուորաց. աստի զվարձ աշխատութեանցն հանեալ, զայլն ի պէս պէս օգուտս ի կիր առնուն. գտանին երբեմն այնպիսիք ի սոցանէ, որք յորժամ աղատին ի ծառայութենէ, տանեն ընդ իւրեանս մինչ հազար լ. արծ. լամբին. Սոքա անարզել կարեն ամուսնանալ եթէ կամիցին. այն օգուտ է ամուսնացելոց, զի կանոյք նոցալունալով և կարելով զհանդերձս են, օգտին ոչ սակաւ, բայց և այս արդիւնք մտանէ ի գանձարանն զնդի. ամուսնացեալքն սակաւ երբէք դառնան ի հայրենիս, այլ բնակին ընդհանրապէս յայսոսիկ սահմանս. եթէ ուրուք կին, որդիք, ևս

և եղբարք մնան ի Ռուսաստան, և ինքն կամի բնակել յայսոսիկ կողմանս՝ կարէ իննդրել զի ի հաշիւ արքունի առաքեսցեն զնոսա առ ինքն, միայն թէ կամ իցէ նոցաւ Շվալիէ Գամբա, որ ճանապարհորդեաց ի Կովկաս ի 1820 ամէ ց1824 ամն և ի լոյս հան զզիսառզութիւնս իւր ի Փարիզ յամի 1826, յորժամ զայ ի խօսել զզինուորաց, որք բնակութիւն կալեալ մնան յայսոսիկ կողմանս, ասէ. « Այսու սկզբամիք մի այն Ռուսիա կարէ դիւրացուցանել զապարայ տիրապետութիւն Ասիոյ հարկ է յամենայն ուրեկ հիմնել նորանոր քաղաքս. զայս արար միայն Աղէքսանդր մեծն, որ յընթացս երկուց ամաց տիրապետելոյն իւր Ասիոյ հաստատեաց աւելի քան զ40 քաղաքս, և միւր անուն զնոսա կոչեաց . . . :

բ. Անցք Գօն Թուրնայու պաշտօնակալին, Սա ոչ ընդ երկար ինչ ժամանակաւ ազատեալ էր ի գերութենէ. 2երքեզաց կամ լաւ ևս ասել Աւգրեկաց, որոց կալեալ զնա կապեն ի շղթայս ծանունս, և յորժամ սկսանի առ ցաւս սրտին բողոքել զի ազատեսցեն ի շղթայիցն, ասեն ցնա. « Եթէ կին լեալ էր քո, յանձնէաք զքեզ ապաւքէն ի պահպանութիւն կանանց. այլ զի այր հա արթասիրտ, և առն հարկ է կրել զնեղութիւն միայն ի շղթայս, » Որշափ ազգու խօսք և իմաստ վեհանձն սրտի.

գ. Սոքա (2երքեզք) առ ամենեսին բերին վատթարութեամբ, մինչև անգամ զԼհՀացիս զիմեալը առ նոսա, ի գործս ծառայականս տանջեալ չարչարեն. Բէլ անուն Անդլիացին երկար եկաց ի նոսա. ի սկզբանն յարգէին զնա. այլ իբրև տեսին թէ ոչ ինչ խոստմունս արար նոցաւ ի մասին օգնութեան Անդլիացւոց ելն, ընդ վայր անցմն, կամէին իրրեն խոռվարար և խարերայ ոք ունել զնա, որ փախուցեալ զերծաւ. միայն կառավարն իմ Գերմանացի գաղթական ասաց ինձ, թէ ես բազում անզամ լեալ եմ առ նոսա և ոչ մի վնաս տեսի ի նոցանէ. յարգանօք ընդունեն զծանրաբարյաց Գերմանացիս:

դ. Զիք ումեք երկիւլ՝ յորժամ ճանապարհորդէ ի Մինդրելիս յՆմերէթ և ի Ալիս. այլ իրրեն մերձենայ ի շէնս Մահմետականաց, վտանգք ուսուղէս կան մնան նմա յերեսաց աւազակաց. և

այնչափ երկիւղալի է զի թէ կամիցիս զբօսանաց աղագաւ հեռանալ ի Տփիւնաց գէմ կէս ժամանակապարհաւ՝ պարտիս առնուլ ընդ քեզ զէնաւ և գէպ գայ ասել աստանօր և զպատմութիւն աւագակին Արտէնի, ունէր աս աօնն անպահան կրպակ ի Տփիւն, և հարեալ ի սէր դատիք Բարգմով*) իշխանին (ինեալ) իննորէ տալ ինքեան զձեռն նորա. Հայր աղջկանն առաջարկէ նմա հատուցանել զգումար ինչ ի ստանալ զգուստը իւր: Արսէն զամն ողջոյն ջանացեալ հայթայիշէ զպահանչեալ, այլ իշխանն յետս կացեալ ի խոստմանցն, պայմանն նորանորս առաջի առնէ նմա, յայնժամ Արտէն գողացեալ զիշկայն զընտիր ձի նորա՝ առնու զաղջիկն և փախուցանէ ի լիրինս. այլ կալեալ զնին զնա ի բանտի, յանցանել քանի մի ամաց արձակի անտի, սակայն իշխանն արդէն տուեալ էր ի կնութիւն այլում զգուստը իւր, զսիրուշին նորա. ուստի թողեալ Արսէնի զքաղաքն, անկանի աւագակութեամբ ի լիրինս և զամն բազում դրդեցուցանէ զշրջակայս Տըփշխաց: Բաղում ինչ պատմեն զւէք և վեշանձն բնաւորութենէ նորա. և ունէր ասեն ընդ համարձակութեանն զկամակոր արութիւն, և անօրինակ զօրութիւն քաջութեան. ուստի ոչ ոք կալ կալ նմա ընդ գէմ. յաւազակեն առնոյր որ ինչ կարեռն էր ի պիտոյս իւր. զէպ լինի մեծափարթամ՝ վաճառականի ուրումն, որ ունէր ընդ իւր մեծագումար զրամ, անկանիլ ի ձեռս Արտէնի, և սիսանի խնդրել ի նմանէ զգմութիւն. յայնժամ թողեալ զնա ազատ և անվեաս, պատուիրէ միայն երթաւ յայս ինչ տեղի և հատուցանել ընդ նա զչորս ը. պարտս: — Գին հատեալ էր զիլոյ նորա, այլ ոչ ոք կարէր առնուլ զայն, միայն կնքահայր նորա ետ ի մոի հնարիւք ունել զնա. ուստի յաւուր միում հրաւիրէ ի տուն իւր:

իրը ընդ նմա խորհուրդ առնելոյ աղազաւ զառանին զործոց, առնու զուրդ նորա, կախէ զորմոյն, և զչետ լինի ամենայն ջանիւք թմրեցուցանել զնա զինեաւ. այլ անդէն լսելի լինին ձայնք և դրզիւնք թշնամեաց շուրջ զտամբ, ովինչ է այս, հարցանէ Արտէն. տէր տանն զունամափի. յայնժամ գուշ Արտէն. « դաւ պատրաստի ինձ, և ահա յարուցեալ անդէն արկանէ զինքն ի վիրայ ձիոյն և մորակեալ աճապարէ ի փախուօտ. հրացանք արձակին զինի նորա, ձին վիրաւորի, և ինքն անվեաս զերծանի, յայնմ օրէ կնքահայր նորա կայր ի մեծի տաղնապի, և նուջէր ի մարգաժողով ի բազմութեան:

Յետ անցից կատարի յաւանն Մարկոփի եկեղեցական տօնահանդէն ինչ ուր ժաղովին մեծագումար բազմութիւնք. երկի անդէն և Արսէն. կէս մասն բազմութեանն ճանաչէր զնա, այլ ոչ ցուցանէր յարտաքին երես զծանօթութիւնն. մերձենայ առ Օրպիկեան իշխանն, որ զտանիւր անդ ընտանեօթ իւրովք և խնդրէ բաժակի մի զինի. իշխանըն կատարէ զինդիր նորա. « ճանաչէս զիս, հարցանէ ցնա, « այս ճանաչէմ զքեզլ Արսէնն ես գու... . յայնժամ ցուցեալ նմա մատամբ զաստիճանաւոր ոմն նստեալ ոչ հեռի ի նոցանէ ասէ, և ինդիս ուրեմն ի դմանէ տալ ինձ զսուսեր իւր... . և խնդրիս գու ինքնին, կրկնէ իշխանն. զնայ Արսէն և խնդրէ. այլ աստիճանաւորն բարկութեամբ մերժէ զնա. զայն տեսեալ իշխանին մօտ երթայ և առանձին խօսս ինչ ասէ յունկն նորա. և նա տայ զսուսերն. յետ փոքր ինչ ժամանակի գայ կրկնն առ Օրպիկեանն և ասէ. « հաճոյ թուեցաւ ինձ ատորճանակդ քոյ, տուր ինձ զայնս, . ուղղէ իշխանն զոտս նորա և ասէ « արի առ... . յառաջ զայր Արսէն, և այն ինչ պատրաստի էր իշխանն արձակել զատրճանակն, զուարթածաղիկն տիգը իշխանութին աղաղակեաց իսկոյն « ի պատիւ սրբոյ հանդիսիս, մի հեղուք զարիւն... . Արսէն զիմեալ անկանի յայնժամ առ իշխանութին և ասէ, « զուք աղատեցիք զինանս իմ, թշլ տուք ինձ համբուրել զձեռն ձեր, . և ծածկեցաւ յամբունէն, ոչ ևս կամելով մեղանչէլ ի սրբազն հանդիսին. և ի միւսում առուր դարձոց զսուսերն տեառն իւրում:

(*) Շառաւիզ տաճմիս գտանի ի նուսաստան. սոքա յառաջ բերեն զժուման իրեանց սկզբն յարտաշիւ արքայէն Պարսից, ուստի և ուստաւ նոցս կոչումն ու երկայնարազուկ և (Բարգմով, Արկայնարդուու). մէ ոք շփաթեցէ զայս տաճմ ընդ ու երկայնարազուկ և տաճմին նուսաց որ յառաջ գայ ի թիւրեկ իշխանէն վարեայուքոյ. գոյ և առ Հայու տաճմ պատուեալ մեծարար անուածու և Երկայնարազուկ և Արգութեանք:

Ո որ պատահէր ի պաշտօնակալաց և աստիւ
ձանաւորաց Առաջ ի ձանագարչին, Հրամիրէր
առ ինքն առնել նախաձաշիկս և ամենեթին ըն-
դունէին զառաջարկութիւն նորա. այլ յաւուր
միում ի մենամարտութիւն մտեալ կորուսանէ
զկեանու Սա ընկերակցաքն իւրովք նոտի առ
ձանագարչաւ Տիփիսոյ, և ի նմին ժամանակի
անցանէ ընդ այն աղնուական ուն Խմբեթացի
ծառափի իւրավ. Արսէն հրաւիրէ զնա ի նախա-
ձաշիկս, այլ միւսն մերժէ ասելով թէ կարեոր
գործս ունիմ. իրեւ նոյն հեռանայ փոքր ինչ,
ասեն ընկերքն ցԵրսէն. “մի՛թէ հաւատաս գու
թէ գործս ունէր նա, ոչ, այլ զի Խղճէր ըմպել
ընդ քեզ զզինի,,,” “մի՛թէ,, հարցանէ. “այս,,
պատասխանեն. և աչա անդէն նոտեալ ի ձի եր-
թայ հասանէ նմա, և վերստին հրաւիրէ. և ի
շանսալ նորա՝ երկոքին ևս մերկեալ զուտսերս
մոանեն կատաղբարի ի պատերազմ. Խմբեթա-
ցին երկիցս առնու վերս. իսկ Արսէն անվաս
մայ տակաւին. յայնժամ դառնայ առաջինն առ
ծառայն իւր և ասէ զայրացմամբ, “Ի՞ր ժուժէ
միրո քո տեսանել զմահ տեսանդ յօտարէն,,
յայնժամ ուղղեալ ծառային զըրացանն դէպ
Արսէն սպանանէ զնա ի տեղւոջն.

(Ն-Դ-Հ-Հ-Հ-Հ-Հ)

ԱՐԵՍՏԱԿԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԵԴՐԱԿԱՆ

ԲԱՆԱԿԱՐԱԿԱՆ

ԱԿՐԵՆԵԿԵՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

ՔՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒԱՌԵԱՆԵՐԻ.

(Ն-Դ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ)

Զ.

ՕՇ հոսումը.

Մենք զիանենք որ մարմինները տաքա-
նալու միջոցին լայնանում են: Այդ պատ-
ճառով եթէ առնենք մեկ խորանարդ ոտ-
նաշափ երկաթ և սկսենք տաքացնել, նո-

րա ծաւալը կը մեծանայ: Երկաթի մաս-
ները կսկսին հեռանալ մինը միւսից և ա-
ւելի մեծ տեղ կը բռնեն, քան թէ մի խո-
րանարդ ոտնաշափը: Այդ պատճառով
մեկ խորանարդ ոտնաշափ տաքացրած եր-
կաթի մասները փոքր կը լինին: Ուրեմն
երբ որ մի խորանարդ ոտնաշափ պաղ եր-
կաթը տաքացնում ենք, նա սկսում է թէ-
թեանալ:

Ա եր առնենք մեկ կլոր յատակով լայն
աման, և նորա մեջ ջուր ածենք: Յեայ
այդ ջրի մեջն ածենք փոքր ինչ փայտի սը-
ղոցուածք և սկսենք վարի կողմից տաքաց-
նել: Մենք կը նկատենք որ փայտի վըշ-
րունքները սկսում են շարժել ամանի
մջ, մջ տեղովք բարձրանում և կողքեր-
քով վար իջնում: Խնչուէ այդպէս լիջնում:

Գուրը վատ հաղորդողներից է, այդ
պատճառով երբ որ սկսում ենք տաքաց-
նել, ջրի այն մասերն են տաքանում, ո-
րոնք զիալում են ամանի յատակին: Տա-
քանալուց ջրի մասները սկսում են լայնա-
նալ և թեթեանալ. վերայի եղած պաղ
մասները ծանր լինելով վար են իջնում
և բարձրացնում թեթեաներին: Այս կեր-
պով վերեի պաղ մասները անդադար
վար են իջնում տաքանում կրկին բարձ-
րանում և նրանց տեղ բռնում են նորէն
պաղ մասները: Այդ նկատելը շատ հեշտ
է, եթէ ուշ գարձնենք փայտի վշրունք-
ների շարժմանը, նոցա վայր ու վեր լինե-
լուն: Որովհետեւ ամանի յատակի միջին
մասն է տաքանում, այդ պատճառով, այդ
ուղղութեամբն էլ ջրի մասերն են տաքա.
նում և բարձրանում, իսկ կողքերիցը
ցածրանում են դէպի յատակը ջրի պաղ
մասները: